ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ս.Տ ՍԹՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Շաղափ բնակավայրի տրավերտինների հանքավայրի շահագործման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկում /2-րդ լսում/

գ. Շաղափ **02.05.2024թ.**

2024 թվականի ապրիլի 30-ին, ժամը 15:00-ին ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքի Շաղափ բնակավայրի վարչական շենքում (գ.Շաղափ,Արարատյան 17) տեղի ունեցավ «Ս.Տ ՍԹՈՆ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Շաղափ բնակավայրի տրավերտինների հանքավայրի հանքարդյունաբերման շահագործման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկում /2-րդ լսում/:

Հանրային քննարկմանը մասնակցում էին Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ներկայացուցիչներ, Շաղափ բնակավայրի վարչական ղեկավար՝ Մ. Առաքելյանը, Վեդի համայնքի ավագանի Ա. Միրզոյանը, «Ս.Տ ՍԹՈՆ» ՍՊ ընկերության Տնօրեն՝ Ն. Ասլանյանը, փորձագետ Մ. Հարությունյանը և այլ ներկայացուցիչներ, ինչպես նաև համայնքի բնակիչներ:

Հանրային քննարկումը /լսումը/ բացեց և խոսքով հանդես եկավ Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը և հայտնեց, որ ՀՀ կառավարության 19.11.2014թ. թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (այսուհետ՝ Կարգ) կազմակերպվել և իրականացվում է «Ս.Տ ՍԹՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Շաղափ բնակավայրի տրավերտինների հանքավայրի շահագործման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկում /2-րդ լսում/:

Հաջորդիվ հայտարարեց, որ ղեկավարվելով կարգի դրույթներով, Վեդի համայնքի ղեկավարի կողմից հանրային քննարկումների պատասխանատու է նշանակվել Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը և վերջինս հանդես եկավ խոսքով :

Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, նշեց, որ քննարկվող հարցի շուրջ 2-րդ հանրային լսումն է, որով առաջարկեց ձեռնարկողին հանդես գալ համապատասխան զեկույցով:

Ելույթ ունեցավ ««Ս.Տ ՍԹՈՆ» ՍՊԸ-ի փորձագետ՝ Մ. Հարությունյանը: Վերջինս ներկայացրեց ՇՄԱԳ հաշվետվությանը վերաբերող մի շարք հարցեր, որից հետո պատասխանեց նախորդ լսմանը բարձացված հարցերին :

Միաժամանակ հայտնեց, որ ընկերության կողմից հայցվող տարածքը Շաղափ բնակավայրից գտնվում է 4 կմ. հեռավորության վրա, մակերեսը կազմում է 10,8 հա:

Ընկերությանը հետաքրքրող տարածքում տրավերտինի պաշարները կազմում են մոտավորապես 1,5 միլիոն խորանարդ մետր: Հանքավայրի տարեկան արտադրողականությունը կլինի մոտ 60,0 հազար խորանարդ մետր: Ընկերությանը հետաքրքրող հողերը երկրագործության վարման համար պիտանի չեն՝ արոտավայրեր են: Աշխատանքները նախագծվում են 20 տարի ժամկետով: Աշխատանքներն իրականացվելու են լեռնատեխնիկական միջոցներով /սղոցում/, պայթեցման աշխատանքներ չեն լինելու:

Հաջորդիվ հարց ուղղեց Շաղափ բնակավայրի վարչական ղեկավար Մ. Առաքելյանը՝

1. Սեփական ջրի աղբյուր լինելու է թե՞ ոչ:
2. Պաշարների նոր գնահատում իրականացվելու է, թե՞ ոչ:

Ընկերության փորձագետ Մ. Հարությունյանը սպառիչ պատասխաններ ներկայացրեց վերը նշված հարցերի վերաբերյալ:

Հաջորդիվ հարց ուղղեց Վեդի համայնքի ավագանու անդամ Ա. Միրզոյանը՝

1. Աշխատուժի վերաբերյալ, որքան աշխատատեղ է լինելու, և արդյոք ընդգրկվելու են Շաղափ բնակավայրից աշխատակիցներ:

Ընկերության փորձագետ Մ. Հարությունյանը պատասխանեց, որ աշխատատեղեր լինելու են՝ ընդգրկվելու են համայնքից,իհարկե նաև ազդակիր բնակավայրից , լինելու է 100 և ավելի աշխատատեղեր:

Հաջորդիվ, համայնքի անունից հարցեր ուղղեց Շ. Բաքոյանը՝

1. Արդյոք հանքավայրը ամբողջությամբ զբաղեցնելու է նախատեսվող տարածքը, և բնակավայրից ինչ հեռավորության վրա է գտնվելու:

1. Բացահանք է լինելու

2.Ինչ եղանակով եք տրավերտինը արդյունահանելու, պնդում եք, որ պայթեցում չի լինելու

3. Արդյունահանվող տրավերտինը Ձեր կողմից է վերամշակվելու, և արդյոք տեղում է վերամշակվելու

4. Ունեք հանքավայրի շուրջ կանաչապատման տեսլական, ոնց եք դա պատկերացնում:

5. Ծանր բեռնատարների շարժը, ճանապարհների անվտանգությունը և գերբեռնվածությունը ինչ եղանակով եք պատրաստվում կարգավորել:

6. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը կունենաք մասնակցություն, ոնց եք դա պատկերացնում, հաշվի առնելով, որ Վեդի համայնքը ունի 18 գյուղական բնակավայրեր և 1 քաղաքային բնակավայր:

Հարցերին պատասխանեցին ընկերության տնօրեն՝ Ն.Ասլանյանը և փորձագետ՝ Մ. Հարությունյանը:

Հաջորդիվ հարց ուղղեց Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ Ս. Կարապետյանը.

1. Աշխատաժամերի սահմանափակում լինելու է արդյոք թե ոչ :

2. Փոշեպաշտպան ինչ մեխանիզմներ եք կիրառելու:

Հարցերին պատասխանեցին ընկերության փորձագետ՝ Մ. Հարությունյանը:

Նախագահողը հարցրեց, թե արդյո՞ք ազդակիր Վեդի համայնքի բնակիչների կողմից կան հարցեր, թե՞ ոչ:

Հաշվի առնելով լսարանի դիրքորոշումը՝ հայտարարեց լսման ավարտ:

Ամփոփելով հանրային քննարկման արդյունքներն ազդակիր Վեդի համայնքի ներկայացուցիչները նախնական հավանություն են տալիս «Ս.Տ ՍԹՈՆ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Շաղափ բնակավայրի տրավերտինների հանքավայրի շահագործման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային 2-րդ քննարկմանը:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 2 թերթ և հանրային քննարկումների էլեկտրոնային կրիչը:

Քննարկումների պատասխանատու՝

ՀՀ Արարատի մարզի

Վեդի համայնքի ղեկավար՝ / / Գ. Սարգսյան

Ձեռնարկող՝ «Ս.Տ ՍԹՈՆ» ՍՊԸ -ի տնօրեն՝ / / Ն. Ասլանյան

Պատասխանատու՝ / / Շ. Բաքոյան

Արձանագրող՝ / / Ս. Կարապետյան

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

«U.S. ՍԹՈՆ » ՍՊԸ-ի Շաղափի տրավերտինների հանքավայրի շահագործման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ << Արարատի մարզի Վեդի համայնքի Շաղափ բնակավայրի վարչական շենքում (գ. Շաղափ, Արարատյան 17) տեղի ունեցած հանրային քննարկումների /2-րդ փուլ/

30.04.2024թ.

<</<	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Ստորագրություն
1.	[illegible]	[illegible]	
2.	[illegible]	[illegible]	
3.	[illegible]	[illegible]	
4.	[illegible]	[illegible]	
5.	[illegible]	[illegible]	
6.	[illegible]	[illegible]	
7.	[illegible]	[illegible]	
8.	[illegible]	[illegible]	
9.	[illegible]	[illegible]	
10.	[illegible]	[illegible]	
11.	[illegible]	[illegible]	
12.	[illegible]	[illegible]	
13.	[illegible]	STSTON [illegible]	
14.	[illegible]	[illegible]	
15.	[illegible]	[illegible]	
16.	[illegible]	[illegible]	
17.	[illegible]	[illegible]	
18.	[illegible]	[illegible]	
19.	[illegible]	[illegible]	
20.	[illegible]	[illegible]	
21.	[illegible]	[illegible]	
22.	[illegible]	[illegible]	

23.	[illegible]	[illegible]	
24.	[illegible]	[illegible]	
25.	[illegible]	[illegible]	
26.	[illegible]	[illegible]	
27.	[illegible]	[illegible]	
28.	[illegible]	[illegible]	
29.			
30.			
31.			
32.			
33.			
34.			
35.			
36.			
37.			
38.			
39.			
40.			
41.			
42.			
43.			
44.			
45.			
46.			
47.			
48.			
49.			
50.			
51.			